ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և նպատակ ունենալով.

1) աջակցել հումանիտար գիտությունների բնագավառում իրագործվող հիմնարար, կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքներին, որոնք գիտության զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում իրականացվում են գիտական կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտական խմբերի և առանձին գիտական աշխատողների կողմից,
2) ֆինանսական աջակցություն ցուցաբերել անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա մրցութային հիմունքներով ընտրված հիմնարար, կիրառական գիտական հետազոտությունների նախագծերի իրագործմանը,
3) աջակցել երիտասարդ գիտնականների կողմից իրականացվող հիմնարար, կիրառական գիտահետազոտական աշխատանքներին,
4) իրականացնել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ նաև օտարերկրյա գիտնականների կամ գիտական կազմակերպությունների հետ իրականացվող գիտահետազոտական ծրագրերի համաֆինանսավորում,
5) աջակցել գիտական հետազոտությունների արդյունքներն արտացոլող մենագրությունների կամ գիտական տեղեկատվության այլ աղբյուրների հրատարակմանը,
6) աջակցել գիտաժողովների, սեմինարների և այլ գիտական միջոցառումների անցկացմանը, ինչպես նաև օտարերկրյա գիտական միջոցառումներին Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գիտական աշխատողների մասնակցությանը,
7) աջակցել Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի կողմից մշակված նոր տեխնոլոգիաների ներդրման ու առևտրայնացման գործընթացներին՝

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են սույն Համաձայնագրին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և իրենց իրավասությունների շրջանակներում համագործակցել՝ գիտական հետազոտություններին աջակցելու նպատակով:

Հոդված 2

Կողմերը միմյանց օժանդակում են գիտական նյութերի և գրականության փոխանակման հարցում, ներառյալ՝ յուրաքանչյուր Կողմի աջակցությամբ հրատարակվածները:

Հոդված 3

Կողմերը միմյանց օժանդակում են գիտական նախագծերի փորձաքննության իրականացման և, որպես փորձագետ, առաջատար գիտնականների ներգրավման հարցում:

Հոդված 4

Կողմերը լուծում են համատեղ նախագծերի իրականացման ընթացքում ստեղծված մտավոր սեփականության հնարավոր պաշտպանության հարցերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 5

Կողմերը հրապարակում են սույն Համաձայնագրի կատարման մասին տեղեկատվությունը իրենց պարբերական հրատարակություններում:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի իրագործման հետ կապված հարցերը Կողմերի միջև լուծվում են նամակագրության միջոցով կամ Կողմերի ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում:

Հոդված 7

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ:

Արձանագրությունը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնի սահմանված կարգով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է ստորագրման պահից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է երեք տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր հաջորդ երեք տարվա համար, եթե Կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Կազմված է հայերենով, Երևանում, 2009 թվականի հոկտեմբերի 21-ին, երկու հավասարազոր բնօրինակով:

Կողմերի իրավաբանական հասցեները

Օրբելի եղբ. փ. 22, Երևան 0028	Գ.Նժդեհի 23/1 Երևան 0026
Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից	**«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կողմից**
նախագահ՝ ---------- Ս. Հարությունյան Կ. S.	նախագահ՝ ---------- Գ. Հարությունյան Կ. S.